


ձայնի բառական մօռուոր հնչումներ կը հանեն, երբ խողովակին մէջ փշուի : Զայնաւորները տարրեր երկայնութեամբ խողովակին մը վերաց հաստատուած սուլիչ լեզուակի մը միջոցակազմուած են : Իսկ բաղաձայններն կազմող զանազան ձեւերն, ճօճումներն ու ձայնները՝ յառաջ կը գան տարբեր դիքով հաստատուած թաղմնթներու միջոցաւ :

ԺԷԴ դարուն սկիզբները՝ **Փ.** Մերսէն, որ շատ մը սնոսի բաներ գրած է զանազան տառերու ներբին զօրութեանց վերայ, կ'ապահովէ, որ ինքը ձայնաւորները ու բաղաձայնները որոշուի արտասանող երդեսն մի տեսած է : Կը յիշուի նաև 1791 ին խօսուն մէքենայ մի, թէւ սոսուգիւ խիստ անջօր կերպով կ'արտասանէր : **Վ.եր.** ֆին տարիներս **Պ.** Բատօ կըսէ թէ : Լոնտրայի մէջ վախճանեալ Վասմօն հոչակաւոր բնագետին քոլ, տեսակ մի հոլուական տիկ տեսածէ, որ քանի մի խօսք կ'արտասանէր : Ամեն մարդ տեսած է նոր տարւոյ պամառագայութեանքը, որ լսութաւականին կըրնայ արտասանել **Պապա**, **Մամա**, և նոյն խոչը կարձ հասոււածներ :

Արդարեւ այս նոր խօսուն մէքենայն յայտնի առաւելութիւն մ' ունի նկատմամբ միւս մէքենայից : Վասն զի ըստ կամաց նուագածուին կարող է արտասանել գրեթէ մարդկային աղքի զանազան բարբառները կազմող ամեն յօդակցութիւններն ու հնչումները : Քանի մի գրեր . բ, պ, և ո ձայնաւորներն այնչափ որոշ չ'են հնչեր : **Ա.լ.բ.** . բայց 'ի մի քանի խիստ արտասանեալ բառերէ, բառական գոհացուցիչ եղանակաւ կը հնչուին :

Ա.յս գործիքը իւր այս ամեն կատարելութեամբն հանդերձ պիտի կարենայ լինել արդեօք նիւթ հետաքրը-

րութեան, ինչպէս ուրիշ եղանակն գործիներն, որը ունեցած են իւրեանց համբաւն 'ի ժամանակին, կամ թէ, կարելի պիտի լինի (ինչպէս յուառլ են մի քանի անձինք) սովոր օգտական ձայնի մերենականութեանու ուսման և մասնաւորաբար խուլ համերց կրթութեան այս նոր ձիւզին համար, որոյ միակ նպատակն է արդէն զանոնք արուեստական կերպի խօսելու վարժեցնել : Անշուշտ այս հարցումներուն պատասխանները պիտի տրուին, եթէ սոյն գործիքը ձեռլունաս անձանց քննութեան յանձնուի :



ԿԱՆՈՆԻ

ՎԱՍՆ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՆ⁽¹⁾

—

Ա.

Գանձք՝ են վասն միիթարութեան կենաց և ոչ կեանքն վասն կուտելց ըգանձն :

Հարցի ցայր մի բարեպաշտ և ուշիմ, թէ արդեօք ովլէ երջանիկ և ովլապերջանիկ, պատասխանեաց, նաև որ եւ կեր եւ սերմանեաց, բարեպաշտ գըտաւ, և նաև որ մեռաւ առանց վայելց ըգանձն, դժբաղդ :

Մի աղօթեր վասն այնպիսի անարդ թշուառականին, որ ոչ գործեաց ըգանձն ինչ կարեկցութեան և որ սպառեաց զրովանեգակ կեանս իւր 'ի կուտել զգանձն տռանց գործ գնելց զանը :

Բ.

Վարդարէն Մալսէս, յօրս վերայ

(1) Ա.յս խօսաները Պարսից Շեի Սաստի անուանի հեղմանկին Ա-Ն-Ե-Ա-Խ-Ա-Պ-Ա- գործէն թարգմանած է 1855 ին Մեծարդաց Գէորգ Աւետիսի Զաքարիանց, որի ի թէտական Հնդկաց :

եղիցի խ ողովութիւն, այսպէս խրամէր զկարուն (1), գործեալ զբարիս այնպիսի իմն եղանակաւ, որպէս բարձրեալն արարեալ է քեզ, նա չ'եղեւ ունինդիր. և լուեալ է քո զլսինմանէ նորա:

Որ չ'ար որ զբարիս դրամովն իւրով, կորուսեալ է զապագոյ յոյս իւր 'ի հոգալ զգանձս:

Եթէ կամիս աշխարհային ընվոց քաղել զօդուտ, ցոյց ընկերոց քոց զայն պիսի գթութիւնս, որպէս Աստուած պարգեւեալ է քեզ:

Արարացիք առեն. լեռ բարերար առանց համարելց զայն պարտաւորութիւնն իմն, յայնժամ կարի իմն հաւաստեաւ շահն դարձի առ քեզ:

Ուր ուրեք ծառ բարերարութեան արմատ առնու, տարածէ զոստո իւր ՚ի վեր քան զերկինս. եթէ ակն ունիս ճաշակել զպտուշ, մշակեալ զծառն իւր նամալ, և մի գներ՝ սլոյ յարմատ նորա:

Մատո՛ զդոհութիւնս Աստուծոյ, զի օդնեց սր երինային ող սրգեւօքն եւ չարար զբեղ անմասն ՚ի լիութենէ բարեաց իւրոց:

Մի պարծիր յընդունին քո ՚ի պաշտօն իմն ՚ի ներքոց թագաւորի, ոյլ լեռ երախտադէտ առ Աստուած վասն զետեղելց զբեղ ՚ի ծառայութեան նորա:

Գ.

Երկու անձինք ՚ի զուր աշխատ եւ զեն և ՚ի գործ եղին զանօգուտ ջանս. նա որ ստացաւ զդանձն առանց վոյ յելելց զայն, եւ նա որ ուսաւ զդիտութիւն, բայց ոչ ՚ի կիր է արկ զայն, որչսի և պարապեալ իցես յուսումն գիտութեանց, յորժամ ոչ գործես իմաստնապէս, տգէտ ես:

(1) Կորոն, Մալակովի աղքականներէն մաք ու նունն է, որ շատ հարուստ էր, կ'երեւ թէ նու լըն է, որ ընտանիքով երկրասց երաւ:

Գրասուն յօր վերոց բարձեալ են զմատեանա՞յ, չ'է կարի իմն ուսեալ և ոչ իմաստուն. զինչ գիտէ նորին դատ սրկ սկաւառակ գլուց. թէ արդեօք բարձեալ ունի զփայտա կամ զմատեանը:

Դ.

Գիտութիւն ՚ի կիր արկցի վասն պաշտպանութեան կրօնի և ոչ վասն ՚ի ձեռու բերելց զճոխութիւնն:

Որ միանդամ չարացար վարեաց վեւր սպարկեշտութեան զհամբաւ եւ զուսումն վասն օգտի, ձեւացոյց զըշտեմարան մի ցորենոյ և ապա խսպառ հրոց ճակատ ետ զայն:

Ե.

Ուսեալ ոք առանց բարեխառնութեան՝ է իբր կոյր ոմն որ բարձեալ տանի զահ մի, ցուցանէ զճանապարհ այլոց բայց ոչ առաջնորդէ անձին իւրում:

Որ միանդամ ընդ խաղ արար զկեանը, վատնեցոց զդրամն իւր առանց գնելց զիր ինչ:

Զ.

Թագաւորութիւն մի ժառանգէ զհամբաւ յիմաստուն արանց և կրօնաստանայ զկատարելութիւն յառաքինեաց:

Թագաւորոք առաւել կարօտ են արանց իմաստնոց, քան արք իմաստունք ոռօճկաց յարքունին:

Ունինդիր լեռ ո՛ թագաւոր իմում խրատու. վասն զի չ'ունիս քան զայտ առաւել աղնուագին առակ ՚ի քումդ բովանդակ դիւանի:

Մի հաւատացես այլում ումեք զգործառնութիւնս քո, բայց եթէ խոնաձանց թէեւ հասարակ զործ չէ պայտպումն իմաստնոց: